ԵԱՆԴ/0057/01/15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Երևան քաղաքի առաջին ատյանի
ընդհանուր իրավասության դատարան,
նախագահող դատավոր՝ Դ. Հարությունյան

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարան,
նախագահող դատավոր՝ Գ.Հովհաննիսյան
դատավորներ՝ Լ.Աբգարյան
Մ.Արղամանյան

30 մայիսի 2025 թվական ք. Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

գրավոր ընթացակարգով քննության առնելով ամբաստանյալ [redacted] վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2024 թվականի փետրվարի 28-ի որոշման դեմ պաշտպան [redacted] հատուկ վերանայման վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2022 թվականի ապրիլի 5-ի դատավճռով [redacted] 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ նաև ՀՀ քրեական օրենսգիրք) 104-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ, 7-րդ, 10-րդ կետերով առաջադրված մեղադրանքը վերաորակվել է, [redacted] մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 15 (տասնհինգ) տարի ժամկետով:

[redacted] նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը թողնվել է անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

2. Առաջին ատյանի դատարանի հիշյալ դատավճռի դեմ պաշտպաններ [redacted] տուժողի իրավահաջորդ [redacted] ներկայացուցիչ [redacted], մեղադրողներ Կ.Հարությունյանը և Վ.Հարությունյանը ներկայացրել են վերաքննիչ բողոքներ, որոնք ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2022 թվականի դեկտեմբերի 22-ի որոշմամբ ընդունվել են վարույթ, և նշանակվել է դատական քննություն: Նույն որոշմամբ ամբաստանյալ [redacted] նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ կալանավորումը, թողնվել է անփոփոխ:

3. Վերաքննիչ դատարանի՝ 2023 թվականի մայիսի 16-ի որոշմամբ, [redacted] նկատմամբ՝ որպես խափանման միջոց կիրառված կալանավորումն այլ տեսակի խափանման միջոցներով փոխարինելու մասին պաշտպան [redacted] միջնորդությունը մերժվել է:

4. Վերաքննիչ դատարանը 2024 թվականի փետրվարի 28-ին կրկին որոշում է կայացրել [redacted] նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված

կալանավորումը այլ տեսակի խափանման միջոցներով փոխարինելու վերաբերյալ պաշտպան [redacted] միջնորդությունը մերժելու մասին:

5. Վերաքննիչ դատարանի հիշյալ որոշման դեմ պաշտպան [redacted] ներկայացրել է հատուկ վերանայման վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2024 թվականի մայիսի 10-ի որոշմամբ ընդունվել է վարույթ, և սահմանվել է դատական վարույթի իրականացման գրավոր ընթացակարգ:

<u>Հատուկ վերանայման վճռաբեկ բողոքի հիմքերը, դրանք հաստատող փաստերը, փաստարկները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ փաստարկներով.

6. Բողոքի հեղինակի կարծիքով՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել քրեադատավարական օրենքի էական խախտում, որը կարող է խաթարել արդարադատության բուն էությունը:

7. Բողոքաբերը միաժամանակ նշել է, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, քանի որ տվյալ հարցի վերաբերյալ առկա են ստորադաս դատարանների կողմից կայացված՝ միմյանց հակասող դատական ակտեր: Այսպես, մի դեպքում՝ ստորադաս դատարանները 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով (այսուհետ՝ նաև ՀՀ նախկին քրեական դատավարության օրենսգիրք) սահմանված կարգով քրեական գործը քննելու հանգամանքը մեղադրյալի նկատմամբ կիրառված կալանավորումը 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով (այսուհետ՝ նաև ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգիրք) նախատեսված այլընտրանքային խափանման միջոցներով՝ տնային կալանքով և (կամ) դրա հետ համակցված այլ տեսակի խափանման միջոցներով փոխարինելու հնարավորությունը քննության առարկա դարձնելու խոչընդոտ չեն համարել, իսկ մյուս դեպքում՝ առկա է այն մոտեցումը, որ եթե քրեական գործը քննվում է ՀՀ նախկին քրեական դատավարության

օրենսգրքով սահմանված կարգով, ապա մեղադրյալի նկատմամբ կարող են կիրառվել միայն այնպիսի խափանման միջոցներ, որոնք նախատեսված են եղել ՀՀ նախկին քրեական դատավարության օրենսգրքով:

7.1. Բողոքաբերը փաստարկել է, որ քրեական գործը ՀՀ նախկին քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով քննելու փաստը չի կարող բացառել մեղադրյալի նկատմամբ տնային կալանք, վարչական հսկողություն կամ համակցված մի քանի խափանման միջոցներ կիրառելու հնարավորությունը, քանի որ ՀՀ քրեական դատավարության թե նախկին, և թե գործող օրենսգրքով նախատեսված՝ խափանման միջոց կիրառելու միակ նպատակը՝ մեղադրյալի պատշաճ վարքագիծն ապահովելն է՝ ղեկավարվելով նվազագույնի սկզբունքով:

8. Բողոք բերած անձը փաստարկել է նաև, որ [redacted] նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանքն այլ տեսակի խափանման միջոցով փոխարինելու մասին միջնորդության քննության օրվա դրությամբ լրացել էր [redacted] կալանքի տակ պահելու 9 տարի 1 ամիսը՝ Առաջին ատյանի դատարանի կողմից նշանակված ազատազրկման ձևով պատժի ժամկետի 2/3-ը: Բողոքաբերի պնդմամբ՝ տնային կալանք կիրառելու դեպքում [redacted] պարտավոր էր լինելու չբացայակել բնակության վայրից, իսկ նրա շարժը հսկվելու էր Պրոբացիայի ծառայության կողմից: Բողոքաբերը փաստել է, որ տնային կալանքի հետ համակցված՝ 15.000.000 (տասնհինգ միլիոն) ՀՀ դրամի չափով գրավի կիրառումն ի զորու էր չեզոքացնելու [redacted] կողմից պատիժը կրելուց խուսափելու, ինչպես նաև դատավճռի կատարմանը խոչընդոտելու՝ Վերաքննիչ դատարանի մտավախությունը:

9. Վերոշարադրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2024 թվականի փետրվարի 28-ի որոշումը և կայացնել դրան փոխարինող դատական ակտ՝ [redacted] նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանքն այլ տեսակի խափանման միջոցով փոխարինելու մասին:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

10. [redacted] մեղադրանք է առաջադրվել հետևյալ արարքի համար. *«(...)*

[redacted]

[redacted] *(...)*[1]*»:*

11. Վերաքննիչ դատարանի՝ 2024 թվականի փետրվարի 28-ի որոշման համաձայն՝ *«(...) Վերաքննիչ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ* [redacted] *նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ կալանավորումը վերացնելու կամ փոփոխելու հիմքեր չկան, նկատի ունենալով, որ նրա նկատմամբ մեղադրական դատավճիռ կայացված լինելու և ազատազրկման ձևով պատիժ նշանակված լինելու պայմաններում նրա կողմից քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց խուսափելու, ինչպես նաև դատավճռի կատարմանը խոչընդոտելու հավանականությունը բարձր է:*

(...)

[1] Տե՛ս վարույթի նյութեր, թերթեր 64-65:

[redacted] *նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը այլ խափանման միջոցներով՝ մասնավորապես գրավով փոխարինելու հարցի քննարկման համատեքստում, Վերաքննիչ դատարանի համոզմամբ վերոնշյալ ռիսկերը չեն կարող չեզոքացվել կամ էապես նվազեցվել ազատությունից փաստացի զրկմամբ չպայմանավորված այլ խափանման միջոցի՝ գրավի կիրառմամբ: Այլ կերպ՝ քննության տվյալ փուլում կալանավորումը այն բացառիկ խափանման միջոցն է, որը կարող է գործուն երաշխիք հանդիսանալ ամբաստանյալի պատշաճ վարքագիծն ապահովելու համար:*

(...)

Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ սույն միջնորդության քննության ժամանակ, [ղեկավարվելով] (...) 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, ինչպես նաև 2022 թվականի հուլիսի 1-ին գործողության մեջ դրված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 483-րդ հոդվածի իրավական կարգավորումներով և արձանագրելով, որ նախորդ օրենսգրքով նախատեսված չի եղել տնային կալանքը՝ որպես ինքնուրույն խափանման միջոց՝ գտնում է, որ ամբաստանյալ [redacted] *նկատմամբ տնային կալանք խափանման միջոց կիրառելու մասին պաշտպանի պնդումները նման պայմաններում առարկայազուրկ են (...)»*[2]:

12. Վերաքննիչ քրեական դատարանի՝ 2024 թվականի ապրիլի 4-ի որոշմամբ, Առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի ապրիլի 5-ի դատավճիռը մասնակիորեն բեկանվել է և փոփոխվել: [redacted] մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ, 10-րդ կետերով և դատապարտվել ազատազրկման՝ 18 (տասնութ) տարի ժամկետով[3]: Դատական ակտն օրինական ուժ է ստացել[4]:

<u>Վճռաբեկ դատարանի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

---

[2] Տե՛ս վարույթի նյութեր, թերթեր 89-98:
[3] Տե՛ս Վերաքննիչ դատարանի՝ 2024 թվականի ապրիլի 4-ի թիվ ԵԱՆԴ/0057/01/15 որոշումը:
[4] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ 2024 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԱՆԴ/0057/01/15 որոշումը:

13. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քրեական գործը ՀՀ նախկին քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով քննելիս մեղադրյալի նկատմամբ ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված այլընտրանքային խափանման միջոցների կիրառման հնարավորության հարցի վերաբերյալ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն վարույթով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղենիշային նշանակություն ունենալ նշված հարցի առնչությամբ միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

14. Սույն վարույթով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչա՞փ է արդյոք ՀՀ նախկին քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատական քննության պայմաններում մեղադրյալի (ամբաստանյալի) նկատմամբ ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված այլընտրանքային խափանման միջոցներ կիրառելու անհնարինության մասին Վերաքննիչ դատարանի դիրքորոշումը:

15. ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *«Անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրավունք ունի վիճարկելու իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը (...)»:*

16. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) 5-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.*

(...)

գ. անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար,

(...)

3. Սույն հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով:

4. Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը (...)»:

16.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան) ձևավորած նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետը ոչ միայն երաշխավորում է ողջամիտ ժամկետում դատաքննության կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունքը, այլ նաև ամրագրում է, որ ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով[5]: Ընդ որում որոշելիս, թե արդյոք անձը պետք է ազատ արձակվի, թե կալանավորվի, վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է քննարկել դատաքննությանը ներկայանալու այլընտրանքային երաշխիքները[6]:

16.2. Ինչ վերաբերում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետին, ապա այն երաշխավորում է ազատությունից զրկված անձի՝ դատարանի կողմից իր կալանավորման օրինականության վերաբերյալ սեղմ ժամկետում որոշում կայացնելու և ապօրինի ազատությունից զրկելու դեպքում դատարանի կողմից

---

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Khudoyorov v. Russia* գործով 2005 թվականի մայիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 6847/02, 183-րդ կետը, *Lelièvre v. Belgium* գործով 2007 թվականի նոյեմբերի 8-ի վճիռը, գանգատ թիվ 11287/03, 97-րդ կետը, *Shabani v. Switzerland* գործով 2009 թվականի նոյեմբերի 5-ի վճիռը, գանգատ թիվ 29044/06, 62-րդ կետը:

[6] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Idalov v. Russia* գործով Մեծ պալատի 2012 թվականի մայիսի 22-ի վճիռը, գանգատ թիվ 5226/03, 140-րդ կետը:

ազատ արձակվելու իրավունքը[7]: Կոնվենցիոնալ այս դրույթը պահանջում է ազատությունից զրկված անձի կողմից իր կալանավորման օրինականությունը վիճարկելու իրավական պաշտպանության միջոցի առկայություն[8]: Նման միջոցի առկայության պարագայում դրան հասանելիությունը չի կարող թողնվել վարույթն իրականացնող մարմնի «բարի կամքին»[9]: Ընդ որում, այդ միջոցը պետք է լինի բավականաչափ հստակ, ոչ միայն տեսականորեն, այլ նաև գործնականում, հակառակ պարագայում այն չի համապատասխանի կոնվենցիոնալ այս դրույթի իմաստով մատչելիության և արդյունավետության պահանջներին[10]:

17. ՀՀ նախկին քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Խափանման միջոցները հարկադրանքի միջոցներ են, որոնք կիրառվում են կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ՝ քրեական գործով վարույթի ընթացքում նրանց ոչ պատշաճ վարքագիծը կանխելու և դատավճռի կատարումն ապահովելու նպատակով:*

2. Խափանման միջոցներն են՝

1) կալանավորումը

2) գրավը

(...)

4. Սույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված խափանման միջոցները չեն կարող կիրառվել մեկը մյուսի հետ կապակցված (...)»:

ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Խափանման միջոցներն են կալանքը և այլընտրանքային խափանման միջոցները:*

---

[7] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Ilnseher v. Germany* գործով Մեծ պալատի 2018 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռը, գանգատներ թիվ 10211/12 և 27505/14, 251-րդ կետը, *Khlaifia and Others v. Italy* գործով Մեծ պալատի 2016 թվականի դեկտեմբերի 15-ի վճիռը, գանգատ թիվ 16483/12, 131-րդ կետը:

[8] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Rakevich v. Russia* գործով 2003 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռը, գանգատ թիվ 58973/00, 44-րդ և 45-րդ կետեր, *G.B. and Others v. Turkey* գործով 2019 թվականի հոկտեմբերի 17-ի վճիռը, գանգատ թիվ 4633/15, 178-րդ կետը:

[9] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Rakevich v. Russia* գործով վերը նշված վճռի 44-րդ կետը:

[10] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *G.B. and Others v. Turkey* գործով 163-րդ կետը:

2. Այլընտրանքային խափանման միջոցներն են՝

1) տնային կալանքը.

2) վարչական հսկողությունը.

3) գրավը.

4) պաշտոնավարման կասեցումը.

5) բացակայելու արգելքը.

6) երաշխավորությունը.

7) դաստիարակչական հսկողությունը.

8) զինվորական հսկողությունը»:

Նույն օրենսգրքի 119-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *«Դատական վարույթում կալանքը կարող է կիրառվել կամ դրա ժամկետը կարող է երկարաձգվել յուրաքանչյուր դեպքում երեք ամսից ոչ ավելի ժամկետով»:*

Իսկ ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքի 122-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Այլընտրանքային խափանման միջոցները կարող են կիրառվել ինչպես առանձին, այնպես էլ համակցված, եթե հնարավոր է ապահովել դրանց պայմանների միաժամանակյա պահպանումը»:*

18. Վերոշարադրյալ իրավական նորմերի առնչությամբ Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ խափանման միջոցների դասակարգումը կալանավորման և կալանքին այլընտրանք հանդիսացող խափանման միջոցների, նպատակ ունի ապահովելու քրեական վարույթի ընթացքում մեղադրյալի պատշաճ վարքագիծը: Խափանման միջոցները կարող են կիրառվել միայն այն դեպքում, երբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ անձը կարող է կատարել ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված գործողությունները կամ դրանցից որևէ մեկը: Ընդ որում՝ վերոնշյալ նպատակի իրականացման համար անհրաժեշտ և պիտանի խափանման միջոցի կոնկրետ տեսակի ընտրության հարցն օրենսդիրը վերապահել է վարույթն իրականացնող մարմնի հայեցողությանը՝ միաժամանակ երաշխավորելով մեղադրյալի պատշաճ վարքագիծը նրա իրավունքների հնարավոր նվազ սահմանափակմամբ ապահովելու հնարավորությունը: Մասնավորապես,

օրենսդիրն ամրագրել է, որ անձի նկատմամբ խափանման միջոց ընտրելիս, վարույթն իրականացնող մարմինը պետք է առաջնորդվի նվազագույնի սկզբունքով, այն է՝ չընտրի ավելի խիստ խափանման միջոց, քան այն, որով քրեական վարույթի ընթացքում հնարավոր կլինի ապահովել մեղադրյալի օրինական վարքագիծը[11]: Ընդ որում, այս սկզբունքի լավագույն իրացմանն է նպաստում նաև ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ խափանման միջոցները համակցված կիրառելու կանոնը՝ ի տարբերություն նախկին քրեադատավարական կարգավորումների, որոնք, բացառությամբ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի (որը կարող էր կիրառվել գրավի, անձնական և կազմակերպության երաշխավորության հետ) նման օրենսդրական հնարավորություն չէին ընձեռում, ինչը կարող էր սահմանափակել վարույթն իրականացնող մարմնի՝ կալանքի փոխարեն այլ խափանման միջոց ընտրելու հնարավորությունը: Մինչդեռ խափանման միջոցների համակցված կիրառման հնարավորություն ընձեռող գործող օրենսդրական կարգավորումները սահմանում են վարույթն իրականացնող մարմնի կողմից մեղադրյալի պատշաճ վարքագիծն ապահովելու առավել ճկուն մեխանիզմներ:

18.1. Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի լույսի ներքո վերլուծելով քրեադատավարական այս նոր կարգավորումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանք միանգամայն համահունչ են Կոնվենցիայի 5-րդ հոդվածով երաշխավորված՝ ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի համատեքստում պետության՝ այս իրավունքին ոչ իրավաչափ միջամտությունը բացառելու համար անհրաժեշտ քայլեր ձեռնարկելու պոզիտիվ պարտականությանը: Ընդլայնելով այլընտրանքային խափանման միջոցների շրջանակը և նախատեսելով դրանց համակցված կիրառման հնարավորությունը՝ օրենսդիրն իրավական հիմքեր է ստեղծել այլընտրանքային երաշխիքների կիրառմամբ կալանքից ազատ արձակվելու իրավունքի ապահովման համար: Ընդ

[11] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արշակ Հակոբյանի* գործով 2022 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ ԵԴ/1194/06/21 որոշման 13.1-րդ կետը:

որում, կալանավորման օրինականության վիճարկման իրավական պաշտպանության արդյունավետ միջոց նախատեսելու՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված երաշխիքի իրացմանն է ուղղված դատական վարույթում առնվազն եռամսյա պարբերականությամբ անձին կալանքի տակ պահելու իրավաչափության ստուգման օրենսդրական պահանջի նախատեսումը:

19. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ անցումային դրույթներն ամրագրող 483-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ *«(...) Այն քրեական գործերը, որոնցով մինչև սույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելը դատական քննություն նշանակելու մասին որոշում է կայացվել, քննվում և լուծվում են մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով»:*

20. Այս նորմի տառացի մեկնաբանությունից բխում է, որ այն քրեական գործերը, որոնցով մինչև սույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելը դատական քննություն նշանակելու մասին որոշում է կայացվել, ***քննվում և լուծվում են*** ՀՀ նախկին քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով: Անդրադառնալով վերոնշյալ նորմում առկա ***քննվում և լուծվում են*** եզրույթներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հիշյալ եզրույթները վերաբերում են բացառապես գործի ըստ էության քննությանը և լուծմանը: Վերոշարադրյալ մեկնաբանության օգտին է խոսում այն հանգամանքը, որ առաջին ատյանի դատարանում բուն դատաքննությունը կարգավորվում է առանձին՝ 10-րդ բաժնի նորմերով, որոնք իրավաչափորեն չեն անդրադառնում խափանման միջոցներին և դրանց կիրառման կարգին, քանի որ այս հարցի քննարկումը ոչ թե ենթադրում է գործի ըստ էության քննություն ու լուծում, այլ մեղադրյալի պատշաճ վարքագծի ապահովմանն ուղղված դատավարական հարկադրանքի միջոցի կիրառման կամ արդեն իսկ կիրառված միջոցի իրավաչափության շարունակական ստուգում: Վերոհիշյալ նորմի այն մեկնաբանությունը, որը ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ խափանման միջոցների կիրառման հնարավորությունը պայմանավորում է գործի ըստ էության քննության կարգով, ոչ իրավաչափորեն սահմանափակում է նվազագույնի սկզբունքով կալանավորման փոխարեն այլընտրանքային խափանման միջոցների կիրառմամբ

անձին կալանքից ազատ արձակելու հնարավորությունը, ինչը հակասում է անձի ազատության և անձնական անձեռնմխելիության կոնվենցիոնալ իրավունքի երաշխավորման պետության պոզիտիվ պարտականությանը: Ընդ որում, վերոնշյալ մեկնաբանությունն իրավաչափորեն կիրառելի է նաև առաջին ատյանի դատարանի կողմից գործի ըստ էության քննության արդյունքում կայացված դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքներով խափանման միջոցի հարցի քննությանը:

21. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ.

- Առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի ապրիլի 5-ի դատավճռով [redacted] մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 15 (տասնհինգ) տարի ժամկետով[12]:

- Առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ բերված բողոքների քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը, 2024 թվականի փետրվարի 28-ին կայացած դատական նիստի ընթացքում քննության առնելով ամբաստանյալ [redacted] նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորումն այլ տեսակի խափանման միջոցներով փոխարինելու մասին պաշտպանի միջնորդությունը, որոշում է կայացրել միջնորդությունը մերժելու մասին՝ արձանագրելով, որ քննության տվյալ փուլում կալանավորումն այն բացառիկ խափանման միջոցն է, որը կարող է գործուն երաշխիք հանդիսանալ ամբաստանյալի պատշաճ վարքագիծն ապահովելու համար: Միևնույն ժամանակ, Վերաքննիչ դատարանը փաստել է, **որ ՀՀ նախկին քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված չի եղել տնային կալանքը՝ որպես ինքնուրույն խափանման միջոց, որի պայմաններում առարկայազուրկ է համարել [redacted] նկատմամբ տնային կալանք խափանման միջոց կիրառելու մասին պաշտպանի պնդումները**[13]:

---

[12] Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:

[13] Տե՛ս վարույթի նյութեր, թերթեր 89-98:

22. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 15-20-րդ կետերում վկայակոչված իրավանորմերի և արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ նախկին քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատական քննության պայմաններում մեղադրյալի նկատմամբ ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված այլընտրանքային խափանման միջոցներ կիրառելու անհնարինության մասին Վերաքննիչ դատարանի դիրքորոշումն իրավաչափ չէ:

23. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ անցումային դրույթներն ամրագրող 483-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված՝ մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով քրեական գործերը քննելու և լուծելու կանոնը պետք է մեկնաբանվի այն հաշվով, որ քրեական գործը ՀՀ նախկին քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատական քննության նշանակված լինելը չի բացառում ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված այլընտրանքային խափանման միջոցներ կիրառելու հնարավորությունը: Ուստի, Վճռաբեկ դատարանի այս դիրքորոշման հաշվառմամբ, դատական պրակտիկան պետք է զարգանա այն ուղղությամբ, որ քրեական գործը ՀՀ նախկին քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով քննելու ընթացքում մեղադրյալի նկատմամբ խափանման միջոցի կիրառման հարցը քննարկելիս, դատարանները պետք է առաջնորդվեն ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգավորումներով:

Ուստի հիմք ընդունելով վերոշարադրյալը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ վիճարկվող դատական ակտը կայացվել է նախքան Վճռաբեկ դատարանի կողմից սույն որոշմամբ վերոնշյալ իրավական դիրքորոշումն արտահայտելը, ինչպես նաև այն, որ սույն գործն ըստ էության լուծող դատական

ակտ է կայացվել, որն օրինական ուժ է ստացել[14]՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ [redacted] վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2024 թվականի փետրվարի 28-ի որոշումը պետք է թողնել անփոփոխ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

24. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ, 34-րդ, 66-րդ, 264-րդ, 281-րդ, 361-րդ, 363-րդ և 400-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

Ամբաստանյալ [redacted] վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2024 թվականի փետրվարի 28-ի որոշումը թողնել անփոփոխ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացնելու օրը:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ

[14] Տե՛ս սույն որոշման 12-րդ կետը